ընդ առաջ էին եկել ժողովրդի մեծ բազմութիւն և դպրոցի աշակերտներն իրենց ուսուցիչներով։ Ս. Հայրապետի հանդստութեան համար շքեղ զարդարուած էր Յովսէփ քահանայի տունը, ուր երկու ժամ հանդստանալուց և ժողովրդին օրհնելուց յետոյ՝ ճանապարհ ընկաւ դէպի Մայր Աթոռ։ Վեհափառի կառքին ուղեկցում էին շրջակայ բոլոր գիւղերի տանուտէրները և բազմաթիւ երիտասարդ ձիաւորներ։ Նորին Վեհափառութեան ընդառաջել էին Սինօդի անդամներից Բաբէր, Յուսիկ և Աշոտ վարդապետները, Ճեմարանի կողմից պ. տեսուչը իւր օգնական Արժ. Կարապետ վարդապետի հետ։

Վեհափառ Հայրապետը Մայր Աթոռս ժամանեց ապր. 8-ին, ժամը 4-ին ճաշից յետոյ։ Մայր Աթոռի միաբանութիւնը զգեստաւորուած խաչով, խաչուառով, լապտերներով, Ճեմարանի սանները իրենց ուսուցիչներով սպասում էին մեծ դարբասի մօտ։ Վեհափառ Հայրապետը կառքից ցած իջնելով՝ ամպհովանու տակ մտաւ և թափորը դէպի Մայր տաճարը շարժուեցաւ «Հրաշափառ» շարականով։ Հայրապետը աղօթելուց յետոյ՝ վեհարան մտաւ հանդստանալու։

Հետևեալ օրը Ս. Էջմիածնի միաբանութիւնը Ճեմարանի ուսուցչական խումբը Մեծ. պ. տեսչի հետ ներկայացան Վեհափառ Հայրապետին Նորա օրհնութիւնն ստանալու։

Ս. Յարութեան կիւրակի օրը Աղոիս Վեհափառ Հայրապետը Ս. պատարագ մատոյց Աւագ սեղանի վերայ. պատարագի ժամանակ գեղեցիկ ներդաշնակութեամբ երգում էր Ճեմարանի երգեցիկ խումբը. Նորին Ս. Օծութեան սպասաւորում էին Գեր. Տ. Տ. Մակար, Անանիա և Յովհաննէս Շիրակունի եպիսկոպոսները, երեք վարդապետ և չորս սարկաւագ։

Մեռելոց երկուշաբթի օրը Վեհափառ Հայրապետը մի ազգու քարոզով մխիթարեց ժողովրդին Ս. Գայիանէի վանքում։

Սինօդի նախանդամ Գեր. Տ. Տ. Սարգիս արքեպիսկոպոսը հիւանդութեան պատճառով Վեհափառ Հայրապետի բարեհաճ թոյլտուութեամբ ապաքինուելու համար ուղևորուեցաւ իւր ծննդավայրն՝ Աբարան։

Վեհափառ Հայրապետի հրամանով Արժ. Սիօն վարդապետը նշանակուեցաւ յաջորդ հին Նախիջևանի. արժ. հայրը ապրիլի 14-ին ուղևորուեցաւ իւր պաշտօնատեղին։

Մայիսի 4-ին Ցաճկաստանից Մայր Աթոռս ժամանեցին Տ. Յովսէփ Ծ. վարդապետ Այվազեան առաջնորդ Ռոդոսթայի և Տ. Յովհաննէս Ծ. վարդապետ Արշարունի առաջնորդ Պրուսայի Հայաստանեայց եկեղեցու պետից եպիսկոպոսական ձեռնադրութիւն ընդունելու։

Մայիսի 4-ին Մայր Աթոռս ժամանեց Աղջուայ սուրբ Ստեփաննոս վանքի վանահայր Արժ. Թադէոս վարդապետ Տ. Նիկողայոսեան։

Ապրիլ 29-ին Մայր Աթոռս էր ժամանել Արժ. Տ. Ստեփան Շիրակունի վանահայր և պահապան Անիի աւերակաց և մայիս 2-ին վերադարձաւ իւր պաշտօնատեղին։

ՃԵՄԱՐԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ։

Ապրիլի 8-ից Մայր Աթոռի Գէորգեան հոգևոր Ճեմարանում սկսուած են քննութիւնները և կվերջանան մայիսի 31-ին։

Տեսչի օգնական Արժ. Տ. Կարապետ վարդապետը հոգևոր Պետի բարեհաճ հրամանաւ իւր առարկաներից նշանակուած ժամանակից առաջ քննութիւն կատարելուց յետոյ Բաղու ուղևորուեցաւ։

— ⁂ —

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ.

Մայր Աթոռի Մատենադարանի համար շնորհակալութեամբ ստացել ենք հետեւեալ գրքերը.

1. Գ. Նիկողայոս Մառից իւր հեղինակութիւնները՝
   ա) Къ критикѣ исторіи Моисея Хоренскаго I. СП. 1898.
   բ) Ани, столица древней Арменіи.
   գ) Изъ поѣздки на Аѳонъ.

դ) Изъ Книги Царевича Баграта о грузинскихъ переводахъ духовныхъ сочиненій и героической повѣсти „Дареджаніани". СП. 1899.

2. Գ. Միքայել Տէրտէրեանից իւր գրքոյկական շարադրութիւնը. — Die obere trigeminuswurzel. Berlin. 1899.

3. Գ. Գ. Ղազարեանից — I. Տառապեալների ծառայ Յոբը II. Կորած բարեկամը. Վաղարշապատ. 1899.

4. Գ. Կ. Կոստանեանից իւր հրատարակած՝

ա) Մկրտիչ Նաղաշ և իւր տաղերը. Վաղարշապատ. 1899.

բ) Գրիգորիս Աղթամարցին և իւր տաղերը Թիֆլիս. 1898։

Մատենագրական՝

Գ. Վ. Ցովսէփեան.

ՏԱՃԿԱՀԱՅՔ.

«Պոլսեբնակ եկեղեցականներուն» — Տ. Մուշեղ վարդապետ, Ամասիոյ և Ակնայ առաջնորդական տեղապահը, — որ նոյնքան գնահատուած է իր հոգևոր հովուութեան պաշտօնին մէջ որքան իր գրական կարողութեամբը ու հրատարակութիւններովը, — Պոլսեբնակ եկեղեցականներուն ուղղած բաց նամակ մը ղրկած է մեզ, ինչպէս նաև բոլոր ազգ. թերթերուն, անկեղծ յուզումի շեշտերով ցաւ յայտնելով Վանայ կրօնափոխութեան շարժման հանդէպ հայ կղերին ցոյց տուած անտարբերութեանը մասին. «Արդեօք չկարդացիք, կը հարցնէ Տ. Մուշեղ վարդապետ, Արեւելքի 3910 թուով հրատարակուած Վանէն նամակը, ուր շատ որոշ կերպով կը շեշտուէր քանի մը վանական խեղճուկ վարդապետներու ձեռք մնացած այդ անհովիւ վիճակին բարոյական ու տնտեսական խնամքի պարտքը. Եւ եթէ կարդացիք, արդեօք ձեր հոգիները թունդ չելան՝ գործնական ճամբով մը պարտաճանաչութեան ու զգացումի արդիւնքը ցոյց տալու. Հիմայ ամենքդ, դուք որ մեր եկեղեցւոյ եպիսկոպոսներն էք, Պոլսոյ մէջ մէկ մէկու վրայ դիզուած, անգամ մը կոչում ըրէք ձեր մարած խիղճերուն ու անձերնիդ բաղդատեցէք օտար կրօնականներուն հետ. ինչ մեծ անդունդ, անոնց գործունէութեանը և ձեր թոյլ ընթացքին միջև».

Տ. Մուշեղ վարդապետ յայտարարելէ ետքը թէ Պոլսոյ բարձրաստիճան հայ եկեղեցականները բարոյապէս պատասխանատու պիտի մնան՝ դաւանափոխութեան հետևանքներուն, ջերմ՝ հրաւէր մը կուղղէ անոնց՝ ժամ առաջ ճամբայ ելլել դէպ ի Վան.

Այս նամակէն մէյմէկ օրինակ ղրկուած է մայրաքաղաքս գտնուող եպիսկոպոսներուն և վարչութեան անդամներուն.

Տ. Մուշեղ վարդապետ, ապացուցանելու համար թէ ինքը որքան անկեղծ է «իր հոգևոր մեծ եղբայրներուն» նկատմամբ իր արտայայտած զգացումներուն մէջ, կաւելացնէ որ եթէ Պոլսոյ եպիսկոպոսներէն մէկը յանձն չառնէ Վան երթալ՝ ինքը պատրաստ է երթալու.

— Վսեմ. Նուբեան էֆէնտի, նախագահ երկրագործական դրամատան վարչական խորհուրդին, նամակ մը ուղղելով ս. Պատրիարք Հօր, յայտարարած է թէ երկրագործական դրամատունը պատրաստ է 2000 ոսկիի փոխատուութիւն մը ընել՝ Վանայ կարօտեալներուն յառաջիկայ ցանքին դիւրութիւն մը ընծայելու նպատակով. Ս. Պատրիարք Հայրը այս առաջարկութիւնը յանձնեց քաղաքական ժողովին նկատառմանը.

— Ցունաց ս. Պատրիարք Հօր խնդրանքը մեր ս. Պատրիարք Հայրը «Հայ եկեղեցւոյ տօնակարգութեան» վերաբերեալ աշխատասիրութիւն մը պատրաստած է զոր պիտի յանձնէ Փէնէրի պատրիարքարանին. Հայագէտ Տիմիդրիոս էֆ. Զօլաքիտէս յունարէնի պիտի թարգմանէ այդ ձեռագիրը:

— Իզմիրի առաջնորդ Տ. Մելքիսեդեկ սրբազան 23 մարտ. մեկնեցաւ մայրաքաղաքէս՝ համակրանքի ջերմագին արտայայտութիւններու մէջտեղ. Երէկ առաւօտ, կանուխէն, Գատըգիւղի ազգայինները թաղ. խորհրդարան կը գիմէին հրաժեշտի ողջոյններին մատուցանելու իրենց սիրեցեալ քարոզչին. Պոլսոյ զանազան թաղերէն ալ բազմաթիւ ազգայիններ փութացած էին հոն.

Ս. Պատրիարք Հայրը իր կողմէ յատկապէս ղրկած էր Տ. Գնել վարդապետը՝ ողջերթ մաղթելու:

Իզմիրի ս. առաջնորդին ողջերթ մաղթելու համար Ղալաթիոյ քարափին վրայ կը գտնուէին Բերայի քարոզիչ Տ. Հմայեակ եպիսկոպոս Դիմաքսեան, Երուսաղէմի Պատր. փոխանորդ Տ. Գէորգ եպիսկոպոս Երիցեան, Տ. Աբրահամ եպիսկոպոս Մամիկոնեան:

Ժամը 10-ին, հրաժեշտի վերջին ողջոյնները փոխանակուելով, բոլոր եկեղեցականներն ու աշխարհականները մեկնեցան շոգենաւէն որ քիչ ետքը ճամբայ ելաւ դէպի Իզմիր.

— Խառն Ժողովը գումարուեցաւ 2 ապրիլ Ղալաթիոյ Խորհրդարանը, նախագահութեամբ Ս. Պատրիարք Հօր և ատենապետութեամբ Տեառն Բարձր. Ցարութիւն փաշայի.

Ժողովը շարունակեց իր խորհրդակցութիւն-